Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայցվորները վերաքննիչ բողոք ներկայացնելիս նախապես վճարել են օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարները և հայցը բավարարվում է, ինչպես նաև հիմք ընդունելով այն, որ Հայցվորների կողմից **գրավոր միջնորդության տեսքով վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարը, որպես դատական ծախս, բռնագանձելու հետ կապված պահանջ չի ներկայացվել, ուստի պետական տուրքի հարցը այդ մասով պետք է համարել լուծված**:

Դատարանը, նկատի ունենալով նաև, որ սույն քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, ևս պետք է համարել լուծված:

4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Սեյսմշին>> ՍՊԸ-ի և <<Ճին նախագիծ>> ՍՊԸ-ի ընդդեմ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի՝ գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով կատարած արձանագրումն անվավեր ճանաչելու, որպես անվավերության հետևանք գնահատող հանձնաժողովի թիվ 5-րդ արձանագրության 4-րդ կետի 4.1-րդ ենթակետով կայացված որոշումն անվավեր ճանաչելու, գնահատող հանձնաժողովի 16.08.2024 թվականի գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, թիվ ՀՏՀՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով բաց մրցույթի շրջանակում <<Սեյսմշին>> ՍՊԸ և <<Շին նախագիծ>> ՍՊԸ կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին 27.08.2024 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցը բավարարել **մասնակիորեն**.

1.1. անվավեր ճանաչել թիվ ՀՏՀՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2024 թվականին սկսված և 12.08.2024 թվականին ավարտված գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 4-րդ կետի 4.1-րդ ենթակետով կայացված՝ <<Սեյսմշին>> ՍՊԸ և <<Շին նախագիծ>> ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը անբավարար ճանաչելու և մերժելու վերաբերյալ որոշումը,

1.2. անվավեր ճանաչել թիվ ՀՏՀՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.08.2024 թվականի՝ 1-ին չափաբաժնի մասով ՀՏՀՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությամբ կայացված որոշումը,

1.3. պարտավորեցնել ՀՏՀՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին թիվ ՀՏՀՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով բաց մրցույթ շրջանակում կայացնել <<Սեյսմշին>> ՍՊԸ և <<Շին նախագիծ>> ՍՊԸ կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու մասին որոշում,

1.4. անվավեր ճանաչել <<<<Սեյսմշին>> և <<Շին նախագիծ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին ցուցակում ընդգրկելու մասին>> Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի 26.08.2024 թվականին կայացված և https://gnumner.minfin.am/hy/search/ կայքում 29.08.2024 թվականին

հրապարակված որոշումը:

2. Հայցը՝ մնացած մասով մերժել:

3. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից հօգուտ <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ի բռնագանձել 350 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

5. **Վճռի <<Եզրափակիչ>> մասի 1.1.-1.4. և 3. կետերը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին**:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE39-657D-45B1-A589 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am